ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-376[1]-04.11.2013-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքի (1 հուլիսի 1998 թվականի) 190-րդ հոդվածի 3-րդ մասում «329,» թվից հետո լրացնել «329.1,» թիվը:

Հոդված 2 . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ				
հ/հ	**Առաջարկության հեղինակը**	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1	2	3	4
1.	ՀՀ Աժ պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	1. Առաջարկվել է Նախագծի հիմնավորման մեջ հստակեցնել Քրեական օրենսգրքի 329, 132-րդ հոդվածների կապը նախագծի 329.1-րդ հոդվածի հետ՝ բացառելու համար պրակտիկայում այդ արարքների որակման հետ կապված խնդիրները: Հստակեցնել, թե Քրեական օրենսգրքի 329-րդ և Նախագծի 329.1-րդ հոդվածների սուբյեկտները ովքեր կարող են լինել: 2. Առաջարկվել է խմբագրել Նախագծի 329.1-րդ հոդվածի տեքստը՝ երրորդ մասի 1-ին կետից հանելով «նկատմամբ» բառը և, ըստ այդմ, խմբագրել:	Ընդունվել է: Ընդունվել է:	Հիմնավորման մեջ կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ կառավարություն	1. Խմբագրել Նախագծի 329.1-րդ հոդվածի տեքստը՝ երրորդ մասի «գործողությունը, որը կատարվել է» բառերը փոխարինելով «արարքները, որոնք կատարվել են» բառերով: 2. Նախագծում ավելացնել, որ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասից անհրաժեշտ է հանել «քաղաքական» բառը:	Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: